

1928

623.45  
Ա - 29

Ա. ԱՆԷԲՍԱՆԳՐՈՎ

Ի Ն Չ Ե Ձ Ե Ռ Ք Ի  
Ն Ռ Ն Ա Կ Ը

~~.....~~

Յ Ե Ր Ե Վ Ա Ն  
1928



13255

74 AUG 2010

ԽՍՀՄ. ԳՐՈՒԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՒՆՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՅԵՔ. ՀՍԽՀ

Ա. ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ

623.45  
Ա-29. ս. զ.

1003  
12980

ԻՆՁ ԲԱՆ Ե ԶԵՌՔԻ  
ՆՈՆԱԿԸ  
ՅԵՎ ԻՆՁՊԵՍ ՈԳՏՎԵԼ  
ՆՐԱՆԻՑ ՄԱՐՏՈՒՄ

—o—o—o—

Շրեժանի № 32 1928

ՀԱՅԿ. ՀՐԱՁ. ԳԻՎ. ՔԱՂԲԱԺՆԻ ԽՄԲԱԳՐ.-ՀՐԱՏ. ՄԱՍ.

1 FEB 2013

Գրառեսց. № 1043 (բ) Տիրամ 3000

Հայպոլիգրաֆի 2-րդ տպ. պատ. № 325

### ԻՆՉ ԲԱՆ Ե ԶԵՌՔԻ ՆՈՆԱԿԸ

Ձեռքի նոնակը-- դա մի պայթուցիկ արկ է, վոր կարելի չի ձեռքով նետել, որինակի համար այնպես, ինչպես քարը կամ ձեռնափայտը: Շատ ծանր չե այդ արկը, ամենամեծը քաշում է մի կիլո (մոտ  $2\frac{1}{2}$  Փ.), ավելի հաճախ նա քաշում է կես կիլո, այնպես վոր, միջակ ուժ ունեցող մարդը կարող է նետել մինչև 60 քայլ հեռու, իսկ յեթե ավելի ուժ գործ դնի՝ մինչև 70 քայլ հեռու: Ուժեղ կամ վարժված մարդը կարող է նոնակը նետել և 75, նույնիսկ, 80 քայլ հեռու:

Նոնակը կազմված է պարուտակից, պայթուցիկ նյութից, վորով նա լցված է, և պատրույգից (բուժինից):

Պարուտակը (կամ սուփը, շապիկը) նման է լինում կամ գինու շշի (կոթ ունեցող խողովակ), կամ նման է խնձորի, կամ լիմոնի և կամ ձվի նման: Պարուտակը լցված է ուժեղ պայթուցիկ նյութով: Այդ նյութի պայթելու ժամանակ պարուտակը պատրուտվում է բազմաթիվ կտորների, վորոնք թռչում են զանազան կողմեր 100, 200 քայլի վրա, յերբեմն և ավելի հեռու: Այդ կտորները (բեկորները) հարվածում են մարդկանց, իսկ պայթյունի ուժը քանդում, հողով լցնում է խրամատները, ծածկարանները. իսկ յեթե նոնակն ավելի ուժ ունի, այն ժամանակ նա կարող է քանդել և ամբողջ մի շենք: Նոնակի պայթյունը առաջ է գալիս պատրույգից (բուժինից): Պատրույգը պայթում է կամ հարվածից վառվում է, կամ պայ-

թում, վառվում ե հատուկ հարմարանքի միջոցով (ինչպես բոցավառիչ միքանիզմի միջոցով): Կրակը հաղորդվում է պայթուցիկ նյութին, վորով լցված է նոնակը:

Պատերազմում նոնակն՝ բից սկսել են ոգավել դեռ շատ հին ժամանակներից: Նրանք հնարվել են համարյա վառողի գյուտից անմիջապես հետո:

Սկզբում պարուտակը շինում էին կավից, մեջը լցնում էին վառող, իսկ հրածակը խցկում էին յուղի մեջ խիմած խժուժ կամ թոկ: Հենց այս թոկը ծառայում էր վորպես պատրույգ: Թոկը վառում էին, թողնում էին, վոր բոցավառվի և ապա նոնակն այդպես բոցավառված դրուծյամբ, կրակի պոչով, նետում էին թշնամու վրա: Այսպիսի արկը քիչ փասս էր հասցնում, սակայն նրա ազմուկն ու գրգռոցը շատ մեծ էր: Դրանով վախեցնում էին անփորձ մարդկանց, իսկ ավելի շատ ձիերին, և այդպիսով քայքայում էին մտցնում թշնամու շարքերի մեջ: Հետագայում նոնակների համար սկսեցին գործածել շշեր, յերկաթե տուփեր (բանկաներ), մինչև վոր մարդիկ սովորեցին շինել չուգունն պարուտակ: Այս արդեն ավելի շատ սարսափ ազդող էր, քան կավից շինածը: Սակայն յերկար ժամանակ դժվարություն էր պատճառում պատրույգը: Նոնակները սովորաբար շինում էին իրենք զինվորները, միայն նոնակներ շինելու նյութերը կրում էին սայլերով: Դրա համար էլ շատ ժամանակ էր հարկավոր հարմարեցվելու համար, թե արդյոք ինչ յերկարության պատրույգ է հարկավոր: Այդ բանը պահանջում էր առանձին հաշիվներ իմանալ, վորոնց մասին գնդի նոնակ պատրաստող վարպետները հասկացողություն չունեին, այլ նրանք ամեն բան անում էին աչքաչափով, հենց դրա համար

էլ հաճախ դեպքեր էր պատահում, վոր նոնակը նետողի ձեռքում պայթում էր, և կամ չէր պայթում հակառակորդի մոտ: Հաճախ հակառակորդը վեցցնում էր այդպիսի ծխող նոնակը և յետ շարտում այնտեղ, վորտեղից նետել էին, կամ հակառակորդը ժամանակ էր ունենում տաք պատրույգը դուրս հանել, վորից հետո նոնակն արդեն անփասս էր դառնում: Այսպիսի անհարմարությունները վերացնելու համար, սկսեցին պատրաստել այնպիսի նոնակներ, վորոնք պայթում էին գետնին կաշեկլիս: Այս, իհարկե, ավելի հարմար էր, քան թե պատրույգը, բայց այդպիսի նոնակները հաճախ չէին պայթում և, բացի դրանից, պահանջում էին չափազանց մեծ զգուշություն նրա հետ վարվելիս: Սայլերով կրել համարյա անհնար էր, վորովհետև հրումից, մի բանի զիպշեկիս նրանք իսկույն պայթում էին: Դրա համար էլ այդպիսի նոնակներից այնքան էլ մեծ հաճույքով չէին ոգտվում, իսկ հետո դրանց մասին բոլորովին մոռացան, վորովհետև հետագայում փոփոխության յենթարկվեց և՛ դենքը և՛ մարտի վարույթը:

Նոնակների մասին մարդիկ վերհիշեցին միայն համաշխարհային պատերազմի ընթացքում, և այն էլ այն ժամանակ, յերբ բոլոր ճակատների հակառակորդները կանգնեցին դեմ առ դեմ կովերու: Այդ ժամանակ հրազենն այն աստիճան զարգացավ և ուժեղացավ, վոր նույնիսկ շղթաներով և վազեվազքով բաց տեղանքով առաջ շարժվելը դժվարացավ: Հակառակորդներն այդ ժամանակ սկսեցին գետինը փորել և մեջը մտնել, հաստատուն խրամատներ շինել, իրենց դիրքերը շրջապատել լարափակոցներով, բազմատեսակ արգելքներ հնարել և այլն: Ճակատները վերածվեցին միապաղաղ բերդերի: Նա, ով ուզում էր հարձակում

գործել, պետք է դուրս քշեր հակառակորդին այդ ամբողջություններից, իսկ այդ բանը այնքան էլ հեշտ չեր: Ամբողջություններից դուրս քշելու համար հարկավոր եր բազմապիսի արկերի հակադասական ծախսում, վորովհետև հրետանին պետք է քանդեր հակառակորդի ամբողջությունները, վորպեսզի իր հետևակի համար ճանապարհ բանա: Մակալյն նույնիսկ հենց ուժեղ հրետանու ուղնությամբ էլ, ամեն մի հարձակում մարդկանց խոշոր կորուստ եր պատճառում, վորովհետև պաշտպանվողի հետևակը, և առհասարակ ամեն հետևակ զորք, շատ կենսունակ է: Նա արագությամբ կարող է լրացնել իր շարքերը և նորից պատրաստվել մարտի համար, նա ամբանում է քանդված խրամատների մնացորդներում և հնարավորություն ունի պաշտպանվելու մինչև վերջին մարզը: Յերբեմն հարձակվողը, ներխուժելով ուրիշի խրամատները, ընկնում եր յերկրորդ գծի խրամատներից տեղացող ամենաուժեղ գնդակոծման տակ կամ կողքերից խաչաձև կրակի տակ (թևերից), ընկնում եր ամեն տեսակ թակարդների ու ծուղակների մեջ հենց խրամատներում, և մեծ կորուստներ տալով հարկադրված եր լինում թողնել ու յետ քաշվել էր գրաված տեղերից: Դրա համար ամեն մի խոշոր մասշտաբով հարձակում ուժից զցում, թուլացնում եր զորքերին, կլանում եր մարտամթերքը, վաճառացնում եր բազմաթիվ զանազան տեսակի տեխնիկական միջոցներ: Ամեն մի խոշոր հարձակումից հետո, զորքերը պետք է յերկաբառև հանգիստ առնելին, լրացնելին իրենց շարքերը, իսկ թիկունքը և ամբողջ յերկիրը անզուրկ կերպով պետք է աշխատեր մարտական հայթայթման նորանոր պաշարներ պատրաստել: Թանգ եր նստում և պաշտպանությունը: Մարտական ընդմիջումը և նոր հարձակ-

ման համար պատրաստության ժամանակը յերբեմն ամիսներ եր տևում:

Յերեկը խրամատներում, սովորաբար, մնում իյին միայն ժամապահներն ու գիտողները, վորոնք արթուն կերպով հետևում եյին հակառակորդի խրամատներում կատարվող ամեն մի շարժումին: Մնացած ըողոր զորքերը հանգստանում եյին, կամ յերկրորդ գծի խրամատներում, կամ մոտիկ յեղած մյուս ապաստաններում, պատրաստ հենց տաղնապի առաջին նշանին կանգնելու իրենց տեղերում: Իսկ գիշերը սկսվում եր պահպանությունը, գործունյա կյանքը: Դուրս եյին սողում հետախույզների մանր խմբակները, թագնվելով հրթիռների և լուսարձակների\*) լույսից, դադարողով, աշխատում եյին, վորքան հնարավոր է, մոտենալ հակառակորդին, ստուգել այն, ինչ ցերեկը նկատել եյին գիտողները, իսկ հաջողության դեպքում և բռնել հակառակորդի դաշտային պահակին: Ապահով ու հարմար տեղերում գնում եյին դաշտային պահակները, վորտեղից կարելի յեր լավ գիտել կամ լսել հակառակորդին: Բանվորների ամբողջ ջոկատներ դուրս եյին գալիս խրամատների յետևը լարափակոցները սար-

\*) Հրթիռները— գրանք փոքրիկ արկեր են փորորդական կամ հատուկ հրացանների համար, այդ հրթիռները լցված են լուսատու բազմաթիվությամբ: Այսպիսի փոքրիկ արկը հրացանի ձիգով բաց են թողնում ուղիղ գետի վեր, և նա կամայ իջնում է ցած և սպիտակ պայծառ լույս է արձակում մտ կես բաղի:

Լուսարձակները— գրանք էլեքտրական լապտերներ են, վորոնք տեղափոխվում են սայլերով կամ ավտոմոբիլներով. իրենցից թողնում են յերկար, մի քանի կիլոմետր լույսի պայծառ ճառագայթ, վորը լուսավորում է վորտեղ հարկավոր է և կուրացնում հակառակորդին: Ծնորհիվ լապտերի առանձնահատուկ կազմության այդ ճառագայթը կարելի յե ցանկացած տեղն ուղղել, վերև ներքև և այլն:

քելու կամ ուժեղացնելու համար, հակառակորդին մոտիկ նոր խրամատներ փորելու, ավելի հարմար ձևով նրան միացնելու հնի հետ՝ ծածկված խրամադիրներով և ելի շրջափակելու փշալարով և բռնել զորքերով և այլն: Յերբեմն ել այդպիսի դիշերային աշխատանքից հետո, վորին հակառակորդը չէր կարողանում խանդարել կամ ժամանակ չէր ունենում խանդարելու, նրա, հակառակորդի հենց քթի տակ, իրեն համար անսպասելի մի նոր ամուր դիրք եր բուսնում: Հետևյալ դիշեր կամ մի ուրիշ ավելի հարմար ժամանակ, այդ դիրքը ավելի ու ավելի ուժեղացնում էլին և փորումը շարունակում էլին ավելի հեռու: Այսպես աստիճանաբար, գիտինը փորելով ու մեջը մտնելով քայլ առ քայլ թշնամիները մոտենում էլին մեկ մեկու: Յերբեմն յերկու կողմերի խրամատները 40, 30 քայլ էլին իրարուց հեռու լինում, այնպես վոր, միայն փշալարն եր բաժանում թշնամիներին իրարից, վորը կապկպվում եր սեպերի, փայտե ձողերի, ծառի կոճղերի վրա: Վորքան խրամատները մոտ էլին թշնամուն, այնքան, իհարկե, ավելի ամուր էլին և այնքան ավելի դժվար եր վռնչացնել այդ խրամատները կամ թշնամուն դուրս քշել նրանց միջից: Հրետանին չէր կարող հարվածել նրանց, քանի վոր իր խրամատները շատ մոտ էլին հակառակորդի խրամատներին: Հրացանի գնդակով խրամատը ծակել չէր կարելի, իսկ հրակնատները \*) ցերեկը խցկում էլին հողալից տուրակներով կամ փակում էլին պողպատե գոնակներով, իսկ դիտողները դիտում էլին պողպատե վահաններից: Թեև զգում ես թշնամու մոտիկու-

\*) Հրակնատները—զբանք անցքեր, ծակեր են խրամատի վերևում (պատվարում) հրացանի և դիտողի համար:

թյունը, լսում ես, վոր նրա խրամատներում ինչ վոր աշխատանք և կատարվում բայց նրան վորսալու վոչ մի հնար չունես: Իսկ յեթե գլուխդ քիչ բարձրացրիր ավելի լավ տեսնելու թե դիմացդ ինչ և կատարվում, վորեև թագնված լավ հրացանաձգի գնդակը կարող է վայրկյանս պես քեզ գլորել քո անզգուշության համար: Յե՛վ ահա մոտիկից, անմերձենալի թշնամուն հարվածելու համար նոր պենքի վորոնումների ժամանակ եր, վոր մարդիկ նորից վերհիշեցին ձեռքի նոսահների մասին:


## ՆՌՆԱԿՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Համաշխարհային պատերազմի վերջերին հայտնվեցին ամեն տիպարի նոսակներ: Նրանք իրարից տարբերվում էլին իրենց ձևով, այսինքն՝ իրենց տեսքով, կամ պայթուցիկ նյութով, պայթումից առաջացած բեկորների (կտորների) քանակով, իրենց քաշով, պատրույգի կազմությամբ և այլն: Նրանք լինում են մի քանի գլխավոր տիպարների և կազմված են յերեք գլխավոր մասից, վորոնց մասին մենք արդեն հիշեցինք, այսինքն՝ կազմված են պարուտակից կամ մարմնից (կորպուսից), պայթուցիկ նյութից և պատրույգից (բուժինից) կամ բոցավառիչ մեքանիզմից: Հենց այս գլխավոր մասերն յե՛լ մենք կքըննենք:

### 1914 թ. սիպարի ուղևակաճ ձեռքի ԳՈՆԱԿ.—

Ինչպես նկարից յերևում է (տես նկար 1) նման է յերկարավիզ գինու շշի: Դրա համար ել յերբեմն ասում են **տաձեկ** նոսակ: Նրա վիզը—գա նոսակի 40թն է: Նոսակի յերկարությունը կոթի հետ միասին 22<sup>1</sup>/<sub>2</sub> սանտիմետր է (մոտ 9<sup>1</sup>/<sub>3</sub> մատն.), քաշը 700 գրամից մի քիչ ավելի յե (մոտ 1<sup>3</sup>/<sub>4</sub> ֆունտ): Նոսակը

ՆՌՆԱԿԻ ՄԱՍԵՐԸ



1. Մարմին
2. Կախարիչ
3. Չափար
4. Կոթի
5. Կոթի հասակ
6. Չարկան
7. Չարկանի ապույց
8. Մարտական զսպանակ
9. Հրահան
10. Ուղղապահ ապույցիկ
11. Բուլիք
12. Յետքաշիկ ապուստով
13. Յետքաշիկի սոճակ
14. Յետքաշիկի զսպանակ
15. Պահպանական սղ
16. Հենարան
17. Յանցիք, վոր բեկորները (կտորները) յեն բաժանվում
18. Պատրույց
19. Պատիճ-բոցավառիչ
20. Պարուրակ
21. Հեռակայության փողակ
22. Ճայթիչ-պատիճ
23. Ճայթիչ
24. Պայթուցիկ լիցք
25. Բիկֆորդյան քուլ

Նկար 1. ՏՐԱՄԱՏԱԾ ԲՈՒՄԱԿԱՆ ՆՌՆԱԿ

պատրաստված է թիթեղից, լցված է հատուկ պայթուցիկ նյութով—տրոտիլով և պայթելիս մի քանի կտոր է լինում. կոթը նույնպես կարող է ուժեղ հարված հասցնել: Կտորների թիվը շատ լինելու համար, նրանակի ներսում պարուսակին քիպ կպած հաղցնում են մետաղե ցանց, վորը պայթելու դեպքում բազմաթիվ կտորների յե բաժանվում ու թռչում՝ զանազան կողմեր: Շշաձև նռնակից բնդամենը ստացվում են 150-


200 կտորներ (բեկորներ): Նրանք թռչում են զանազան կողմեր 60, 70 քայլ հեռու, շատ հազվագյուտ դեպքերում և 80 քայլ հեռու:

Նռնակը պայթում է պատրույցի միջոցով, վորը պատրաստում են պղնձից կամ արույրից (լտտունից), ծնկաձև խողովակի նման յերեք ծնկից, վորը կեռի (կրյուչոկի) յե նման: Կեռի կարճ ծայրում գտնվում է բոցավառիչը, վոր նույնն է ինչվոր հրապատիճը (պիստոնը) փամփուշտի մեջ, միայն վոչ թե կրակը նրանից անմիջապես հաղորդվում է լիցքին, այլ նախ վառում է հատուկ կրակատար վառողային քուլը, վորը կոչվում է բիկֆորդյան քուլ: Այս քուլի միջով կըրակն անցնում է մինչև, այսպես կոչված, ճայթիչին (դիտոնատոր): Ճայթիչ և կոչվում այն ուժեղ պայթուցիկ նյութը, վորը վոչ միայն վայրկյանապես բոցավառվում է, այլև պայթեցնում է իրեն շրջապատող մյուս պայթուցիկ նյութերը և վորոնք առանց ճայթիչի, հասարակ կրակից միայն վառվում են, բայց վոչ պայթում. ինչպես որինակ՝ հրացանի գնդակից թափված վառողը: Կրակը բիկֆորդյան քուլի միջոցով բոցավառիչից ճայթիչին հասնում է 4-5 վայրկյանում, այսինքն՝ մինչև վոր նոսաձիգը ժամանակ կշահի արագորեն 6 կամ 7 անգամ յետ թռչել. պայթյունի համար այսպիսի հապաղում է արված նրա համար, վոր նռնակը ժամանակից առաջ չպայթի կամ ձեռքի մեջ չպայթի, այլ 60-70 քայլ նետվելուց հետո պայթի, այսինքն՝ նետվի մինչև հակառակորդը: Թե ինչպես է կազմված նռնակը, այդ լավ տեսանելի յե տրամատած նռնակի նկարի վրա. այդ պատճառով մենք միայն համառոտ կերպով կասենք թե ինչպես է առաջ գալիս պայթյունը և ինչպես պատրաստել նռնակը նետելու համար:

Նկարի վրա յերևում է, վոր կոթի մեջ հաղցրած

ե յետքաշիկը, վորը ազատ կերպով շարժվում ե իբր սոնակի վրա, յերտքաշիկի առջևի ծայրին կա ապուռ վերևից, ապուռը պահում ե զարկանը մարտական վնասի վրա՝ Յետքաշիկը կոթից դուրս ե ընկնում զսպանակի միջոցով, բայց ժամանակից առաջ դուրս ընկնելուն խանգարում ե այն ողը, վորը պարփակում ե (չորս կողմից բռնում ե) իբր մեջ կոթը յետքաշիկի հետ միասին: Յեթե այս ողն արագությամբ ձիգ տանք, այն ժամանակ յետքաշիկի ներքևի ծայրը կոթից դուրս կպլըրծնի, իսկ վերևինը ապուռի հետ միասին, ընդհակառակը, կմտնի կոթի մեջ ե կազատի զարկանը: Զարկանը—զա ասեղ ե մարտական զսպանակի վրա, — իբր խթոցով խփում ե պատրույզի կարճ ծայրին, հրապատիճ-բոցավառիչին, իսկ բոցավառիչը ուղարկում ե կրակը (բիկֆորդյան քուզի միջով) դեպի ճայթիչը: Ծայթիչը պայթեցնում ե պայթուցիկ նյութը հենց նոնակի մեջ ե այդպիսով նոնակը կտոր-կտոր ե լինում: Վորպեսզի պատրույզ հաղցրած նոնակը, այսինքն՝ լցրած ժամանակ, չպայթի, — իսկ այդ պատահում ե այն ժամանակ, յիբր ողը պատահարար կամ նոնաձիգի անփորձության պատճառով ժամանակից առաջ դուրս պլրծնի կոթից, — դրա համար նոնակի տուփի վրա կա հատուկ բուլիք-պահպանակ, վոր պահում ե զարկանը: Այս բուլիքը դեպի յետեքաշվում ու զարկանն ազատում ե այն վայրկյանին, յերբ նոնակավորը ձեռքը յետ ե քաշում նոնակը նետելու համար:

Յուրաքանչյուր մարտից առաջ հարկավոր ե ստուգել, արդյոք սարքին ե նոնակը ե լսով են գործում նրա մասերը թե վոչ: Իրա համար հարկավոր ե ամենից առաջ դատարկել նոնակը, այսինքն՝ դուրս հանել պատրույզը, հետո մատնեբով սեղմել յետքաշիկին, փորձել, արդյոք լսով ե դուրս հրվում թե վոչ:



Նկար 2. ԻՆՁՊԵՍ ԲՈՆԵԼ  
ՁԵՌՔՈՒՄ ՆՌԵԱԿԸ ՆԵՏԵ-  
ԼՈՒՅ ԱՐԱՋ (ԲՈՒԼԻՔԸ  
ՅԵՏ Ե ՔԱՇԱԾ)

Յեթե յետքաշիկը կանգ ե առնում—դանդաղ ե դուրս գալիս, —նշանակում ե նրա զսպանակը փչացել ե, ե նոնակը—անպետք է (պետք ե խոտանել):

Հետո պետք ե մաքրել, յեթե հարկավոր ե—զարկանի անցքը, պատրույզի անցքը (ծակը) փչել ե նայել սարքին ե արդյոք ինքը զարկանը, չի՞ ծովել ե լսով ե գործում արդյոք մարտական զսպանակը: Այս ստուգելու համար հարկավոր ե արագ կերպով ձիգ տալ ողը, առանց սեղմելու յետքաշիկին: Զարկանը պետք ե այդ ժամանակ արագությամբ իջ-

նի ե սաստիկ կերպով չըրևիկա: Ծոված զարկանը փչացած զսպանակի հետ միասին կամ միջև բոցավառիչին չի հասնի կամ թույլ հարված կտա, այնպես վոր նոնակը չի պայթի:

Իրանից հետո պետք ե նայել, արդյոք լսով ե գործում բուլիքը, այսինքն՝ ազատ կերպով յետքաշվում է թե վոչ: Վերջապես պետք ե նայել պատրույզը: Պատրույզի վրա չպետք ե լինի վոչ ձեղքեր, վոչ տրորված տեղեր:

Համոզվելով, վոր նոնակը ե պատրույզը բոլոր մասերով սարքին են, պետք ե պատրույզն անցկացնել իբր անցքի (ծակի) մեջ, բուլիքը դեպի առաջ տալ, այսինքն՝ զարկանը պահպանակի վրա դնել. ամրացնել պատրույզը պտուտակի բանալիով, վորը գտնվում ե նոնակի մարմնի (կորպուսի) վրա, վորպեսզի


պատրույգը նոնակի թռչելու ժամանակ դուրս չընկնի, վերցնել նոնակը աջ ձեռքը, մասնորոշ սեղմել յետքաշիկին, յետ քաշել բուլիքը և նետել նոնակը հրամանով կամ յերբ հարկավոր և, այնպես, վոր սղջ մնա ձեռքում:

Յեթև նետելու համար պատրաստած նոնակը վորևե պատճառով չի նետված, այն ժամանակ հարկավոր և խելույն եեթ տեղը գնել բուլիք-պահպանակը և զգուշությամբ հանել պատրույգը:

Յեթև պատրույգը վորևե պատճառով պինդ և նստել և դուրս չի գալիս, այն ժամանակ յերբեք չի կարելի նրան փորթրել, չանդոտել, դուրս հանել պտուտակիչով կամ մի վորևե ուրիշ բանով, առավել ևս թափ տալ հարվածների ոգնությամբ, նոնակը ձեռքի ափին խփելով կամ խփելով վորևե կոշտ բանի: Ավելի լավ և լաված պատրույգով նոնակը ուղղակի հանձնել հրահանգչին:

**1915 թվի Քրեմսիակաճ ձեռքի եռակ, F. 1.** արտաքին տեսքով և առանց պատրույգի նման է յերկարավուն ձվի (տես նկար 3) և կշռում և 560 գրամ (մոտ  $1\frac{1}{2}$  ֆունտ): Պարուտակը չուգունից և, յերկարությամբ ու լայնությամբ կտրված են ակոսներով, այնպես վոր արտաքինով թվում և թե ամբողջ նոնակը ծածկված և քառանկյունի շաշկի քարերով: Այդ ակոսների թվի չափով ևլ մոտավորապես պարուտակը պայթում և կտորների, այսինքն՝ ինչքան ակոսներ այնքան կտորներ՝ 70-90 կտորներ, վորոնք թռչում են դանազան կողմեր 200, 250 քալլ հեռու: Այս նոնակը ավելի թեթև և ավելի հարմար է նետելու համար, քան թե սուտական շշաձև նոնակը, վորովհետև այստեղ նետման ժամանակ պետք չե հետե-

վել ողին: Դրա համար ևլ ֆրանսական նոնակը կարելի չե նետել 80 քալլ հեռու:



ՆՌՆԱԿԻ ՄԱՍԵՐԸ

1. Մարմին
2. Ողան
3. Վառն
4. Դրոի խողովակ
5. Պատիճ (բոցավառիչ)
6. Ներսի խողովակ
7. Խիթոց
8. Պատրույգ (բեկֆորդյան քուղ)
9. Ընթիվ
10. Պահպանական թուտակ
11. Պայթուցիկ լիցք:

Նկար 3. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆՌՆԱԿ

Պատրույգը կազմված է յերկու ուղիղ խողովաղից. արտաքին և ներքին, ընդվորում ներքին խողովակի մեջ տեղավորվում և հատուկ խիթոց, վորը փոխարինում և զարկանին: Բեկֆորդյան քուղը նույնքան և հաշված վորքան շշաձև նոնակինը, 4-5 վայրկյան վառվելու համար:

Նոնակը նետելուն պատրաստելու համար հարկավոր և ամենից առաջ նոնակի պատկանելիք խցա-

հանի (շտոպորի) ոգնութեամբ կամ հելուսով (միլով) հանել խցանը, ապա փայտիկի ծայրով փոս անել նոնակի պայթուցիկ նյութի մեջ պատրույզի ճայթիչը հազցնելու համար: Յերբոր այս փոսը պատրաստ կլինի և ճայթիչը նրա մեջ՝ հեշտութեամբ կմանի. պատրույզը նրա հետ միասին զգուշութեամբ պետք է պտուտակել նոնակի մեջ, բռնելով նրա փոսնից: Հեշտ պտուտակելու համար լավ է ակոսները յուզել կամ յուզով կամ վազելինով:

Յերբ պատրույզը զրված է և ալդպիսով նոնակը լցրած պատրաստ է, պետք է վերցնել աջ ձեռքը, պինդ սեղմել մասներով, իսկ ձախ ձեռքով զգուշութեամբ հանել պահպանական թասակը, վորը ծածկում է դրսի խողովակի հատակը: Յերբ այս բոլորը կատարված վերջացած կլինի, նշանակում է նոնակը պատրաստ և մարտի համար: Նետելու համար պետք է դրսի խողովակի հատակը ախինքն՝ այն տեղը, վորտեղ թասակն է, ուժեղ կերպով խփել, ձեռքի ափին, հրացանի կոթին կամ ծնկին և իսկույն ետ ձեռքը նոնակը: Դրսի խողովակը հարվածից զեպի ներս և շարժվում, և հրապատիճը, վորը տեղավորված է արտաքին խողովակի վրա, խթոցի վրա յե ընկնում, բոցավառվում և և վառում է և բիկֆորդյան քուզը, իսկ սա 4—5 վայրկյանից ճայթիչը տրաքեցնում է:


Յեթև նոնակը պտուտակած մտցրած պատրույզով և հանած թասակով չի նետվում վորեև պատճառով, այն ժամանակ հարկավոր է իսկույն ետ ձեռքը շտոպոր՝ այնպես վոր դրսի խողովակը շարժվի տեղից, նորից հազցնել թասակը և զգուշութեամբ յետ պտուտակել պատրույզը:

1003 08671

**Միլսի անգլիական ձեռքի ցոցակը** (տես նկար 4) արտաքին տեսքով, առանց պատրույզի նման է 1915 թ. տիպարի ֆրանսիական նոնակին, վորի մասին վերևում խոսեցինք: Մլա պարտական է կարտված և ակոսներով, նույն քաշն ունի և նույն հեռավորութեան վրա յե թռչում են կրտորները, թեև կտորների թիվը մի քիչ պակաս է: Տարբերութունը միայն պատրույզի կազմութեան և զարկանն իջեցնելու ձևի մեջ է, վորը գտնվում է հենց իրեն նոնակի մեջ, նրա ներսում:

Դրսի կողմից դուրս պրծած զարկանի զլխիկը ճանկված է (բռնված է) հատուկ լծակով, վորը նրոնակի դրսի վրա մասում է գտնվում և նույն նշանակութունն ունի, ինչ վոր ուսուսական շշաձև նոնակի յետքաշիկը: Պատրույզը բոցավառիչի, ճայթիչի և բիկֆորդյան քուզի հետ միասին կեռի նման կորացրած խողովակի տեսք ունի. բիկֆորդյան քուզը հաշված է 5 վայրկյանում վառվելու համար:

**ՆՌՆԱԿԻ ՄԱՍԵՐԸ**



1. Մարմին
2. Վռան
3. Ոցան
4. Դրսի լծակ
5. Չարկան
6. Մարտական դադանակ
7. Բուլբո ողով
8. Լծակի տանակ
9. Սողովակ
10. Պատրույզի վոսն
11. Բիկֆորդյան քուզ
12. Պատիճ-ճայթիչ
13. Սփող պատիճ (բոցավառիչ)
14. Պայթուցիկ կցը:

Նկար 4. ՄԻԼՍԻ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆՌՆԱԿ ՄԱՍԵՐԻ ԿՑԱՆԻ Անվան 17


Նոնակը նետելուց առաջ, պետք է յետ դա՝ ձնեկ վռսնը, հազցնել պատրույզը, ինչպես նկարում ցույց է տրված և վռանը վորորել (պտուշտ տալ), ապա վերցնել նոնակը աջ ձեռքը, մասներով սինդ սեղմել արտաքին լծակին դեպի նոնակի մարմինը, հանել բուլիքը (ճուլիին) ողի հետ միասին և նետել նոնակը: Միճեյվ գոհակի ցեսոււմը լծակը պեճ է պիճոյ սեղմած պաճեկ, վորովհետև հենց վոր լծակը մի քիչ դեպի կողմը թեքվի, իսկույն կսկսի բոցավառվել և 5 վայրկյանից հետո պայթիւնը: Նոնակը նետելու վայրկյանից, զսպանակը յետ և հրում լծակին և աչգպիտով ազատում և զարկանի գլխիկը, իսկ զարկանն իր մարտական զսպանակի լարվածությունից խփում և պատիճին, և պայթյունը կատարվում է նույնկերպ, ինչպես և մյուս նոնակներինը:

Լծակը մինչև նետումը չպետք է շարժել իր ակղից և յեթե նոնակը վորևե պատճառով չի նետվում այն ժամանակ հարկավոր է իսկույն հազցնել բուլիքը, իսկ հետո յետ պտուտակել վռանը և զգուշ կերպով հանել զարկանը, առանց չանգոտակու նրան:

Մեր թված բոլոր նոնակները և մյուս մի քանիսները, վորոնք նրանց նման են, կոչվում են **Խարվածալիճ** գործողության նոնակներ, վորովհետև նրանցում զարկանը խփում է բոցավառիչին կամ ինքը բոցավառիչը ընկնում է զարկանի վրա: Սակայն, բացի զրանցից, նոնակներ ել կան. վորոնց պատրույզը բոցավառվում է նույնկերպ ինչպես որինակ լուցկին քսես իր աուփի դեղին, այսինքն՝ բոցավառվում է բոցավառիչի ն հատուկ նյութի շփումից. այդ նյութը ակղավորված է լինում կամ պատրույզի մեջ կամ առանձին թիթեղի վրա: Աչգպիսի նոնակները կոչվում են **Եփակահ:** Եփական նոնակներից ամենից

չառ գործածական են գերմանական, անգլիական և կեմանի ձեռքի նոնակները:

**Գերմանական սիպարի ձեռքի գոհակ** (տես նրկար 5) կըր չուգունե պարուտակ ունի, նույնպես կարաված և ակոսներով, ինչպես անգլիական և ֆրանսիական նոնակները. քաշն է մոտ 800 գրամ (մոտ 2 ֆունտ): Այս նոնակը մեծ ուժ ունի, տալիս է մինչև 90 բեկորներ (կտորներ), վորոնք կարող են հարվածել 250, 300 քայլ հեռավորության վրա: Նոնակը կարելի յե նետել 70, 80 քայլ հեռու:



Նկար 5. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՆՌՆԱԿ  
ՆՌՆԱԿԻ ՄԱՍԻՐԸ 1. Մարմին, 2. Պատրույզ, 3. Վառողային բաղադրություն, 4. Պարկուճ շփական հարմարանքով, 5. Արուբի շփիչ, 6. Կախարիչ, 7. Գաղերը գուրս գալու անցք, 8. Պայթիւցիկ լիցք:

Այս նոնակի պատրույզն իրենից ներկայացնում է մի խողովակ, վորի ներքևի ծայրը փաթաթված է մհլամի նման ժապավենով, վորը ծածկում է պատրույզի միջի անցքը: Պատրույզի մեջ պատիճ-բոցա-

վառիչի տեղ հազցվում և պարկուճ հատուկ չփական բաղադրությամբ, պարկուճի վրա պտուտակվում և թասակը՝ պահպանելու համար: Շփական բաղադրության մեջ հազցված և շփիչը, այսինքն՝ պղնձե կամ արույրե ատամնավոր ձող, վորի ծայրը թասակի միջով գուրս և գալիս և վորովում և կանթի նըման: Նոնակը նետելու մոմենտից առաջ, այդ կանթից կեռի ոգնությամբ ձանկվում և մի հատուկ Բուզ, վորի մյուս ծայրն ունի պտուտակիչ:


Այս քուզի սգնությամբ շփիչի արագ ձիգ տալուց, շփիչը քսվում և շփական բաղադրությանը, վորը իսկույն եեթ բոցավառում և հատուկ վառողաչիճ դաղադրութունը վորը գերմանական նոնակում փոխարինում և բիկֆորդյան քուզին: Այս բաղադրությունը վառվում և 6—7 վայրկյանում: Քուզի միջով հասնելով մինչև անցքերը, վորոնք փակված են մշլաժային ժապավենով, կրակը փոխանցվում և պայթուցիկ լիցքին, վորը և նոնակը կտոր-կտոր և անում:

Նախքան նոնակի նետելը հարկավոր և նախ և առաջ քուզի ծայրում յեղած նոնակի վզի ցլինկի վռանը պտուտակիչով յետ պտուտակել. հետո վերցնել պատրույգը, հանել նրանից մշլամային ժապավենը, պատրույգը պտուտակելով ներս մըացընել վռանի փոխարեն: Ներս պտուտակելիս պատրույգի գլխիկից պիտի բռնել, և յերբեք շփիչից չբռնել, վորպեսզի պատահարաք ձիգ չտաք և շփիչը չզարձնեք, վորպեսզի հնարավորություն չըտաք շփական բաղադրությանը բոցավառվելու:

Յերբ արդեն պատրույգը ներս պտուտակված վերջացած կլինի, պետք և նոնակը վերցնել աջ ձեռքը, իսկ քուզը՝ ձախ ձեռքը, կեռով քուզը շղթայել շփիչի կանթին և սաստիկ շարժումով ձախ ձեռքի

շփիչը պոկել: Իրանից հետո, նոնակը կամ ուղղակի պետք և նետել—յեթե հարկավոր և հետո տարածության վրա նետել (80 քայլի վրա), կամ պահել ձեռքում 2 հաշվելով—յեթե հարկավոր և նետել 50 քայլ հետո, վորովհետև բոցավառվելուց հետո կրակը այս նոնակում փոխանցվում և մի քիչ ուշ, քան թե մյուս նոնակներում:

**ԼԵՄԱՆԻ ԱՆԳՐԻԱԿԱՆ ԳՆՈՒԿԸ (տես նկար 6)**  
 Կատարելապես կլոր հարթ չուգունն պարուտակ ունի, վորի մեջ և պտուտակվում պատրույգի համար կափարիչը իր խողովակով: Նոնակը քաշում և մոտ 600 գրամ (1½ ֆունտ) և շատ հարմար և նետելու համար, վորովհետև չունի վոշ ող, վոշ լծակ և վոշ քուզ, վորոնց վրա նետման ժամանակ պետք և մեծ ուշադրություն դարձնել: Իրա համար կարելի յի հեշ-



Նկար 6. ԼԵՄԱՆԻ ԱՆԳՐԻԱԿԱՆ ՆՈՆԱԿ  
 ՆՈՆԱԿԻ ՄԱՍԵՐԸ: 1. Մարմին.—2. Կափարիչ.—3. Խողովակ.—4. Պատրույգ.—5. Բիկֆորդյան քուզ.—6. Գլխիկ շփական բաղադրությամբ.—7. Ժապավեն.—8. Թասակ.—9. Պայթուցիկ լիցք.—10. Պրզնե լար.—11. Անցքեր կափարիչը պտուտակելու համար:

տու թշամբ նետել 80 քայլ հեռավորութեան վրա: Պայթելի նա յերբեմն մինչև 150 մանր կաորներն յե բաժանվում, վորոնք հարվածում են 100, 150 քայլի վրա պայթելու տեղից հաշված:

Պատրույզը մի ուղիղ խողովակ է ձայթիչով բիկֆորդյան քուլով և բոցալառիչով շփական բաղադրութեամբ, վորը սովորաբար ծածկվում և արձիճե (կապարե) թասակով կամ փաթաթված և ժապավենով:

Նոնակը մարտի համար պատրաստելիս հարկավոր է ձախ ձեռքին՝ թաթի և արմուշնի միջև կապել առանձին փոքրիկ տախտակ — շփիչ: Հետո պետք է փչել կամ մաքրել պատրույզի համար նոնակի մեջ յեղած խողովակը, հաղցնել այդ խողովակի մեջ պատրույզը մինչև զեմ աննելը և վորտեղ նրան չար վ նոնակի կափարիչի վրա յեղած բեյկոտիկին, (ինչպես այդ ցույց է տված նկարում) վորպեսզի պատրույզը նետած ժամանակ զուրս չգա: Դրանից հետո, հարկավոր է վերցնել նոնակը աջ ձեռքը, իսկ ձախով սրկել ժապավենը պատրույզի գլխիկից և հանել արձիճե թասակը, յեթև կա: Շփական բաղադրութեանը զրա շնորհիվ կրացվի, և նոնակը պատրաստ կլինի մարտի համար:

Նախքան նոնակի նետելը, պետք է պատրույզի գլխիկը շփել ձեռքում յեղած շփիչին, իսկ յեթև նման շփիչ չկա կամ փչացել է, որինակ, խոնավացել է, թացացել է, այն ժամանակ կարելի չէ և քսել (շփել) սովորական լուցիկ տուփին: Շփական բաղադրութեանը քավելուց (շփվելուց) կրոցավառվի պատրույզի գլխիկում, կրակը կհաղորդի բիկֆորդյան քուլին, և 4—5 վայրկյանից հետո պայթում կառաջանա:

Յեթև նոնակը չի նետվում, իսկ ժապավենը պատրույզից արդեն սղոկված է, այն ժամանակ պատ-

րույզը պետք է հանել, և յեթև չի կարելի նոնակը շուտով ողտագործել, այն ժամանակ այդ պատրույզը ավելի լավ է այլևս չգործածել, վորովհետև բաց յեղած ժամանակ ատ շուտ փչանում և և հեշտութեամբ խոնավանում:

## ԻՆՉՊԻՍԻ ՆՈՒՆԱԿՆԵՐԻՑ ԱՎԵԼԻ ԼԱՎ Ե ՈԳՏՎԵԼ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՎՈՐՎԵԼ ՆՐԱՆՑ ՀԵՏ

Սովորաբար յուրաքանչյուր բանակ ունի իր սեփական տիպարի նոնակները, վորոնց վրա է ժարտիկները սովորում են նոնակաչին գործը: Սակայն մեղանում, քաղաքացիական պատերազմից հետո, սպիտակ գեներալներից հետո ֆրանցիզ է մեծ քանակութեամբ սպանական ավար, այդ թվում է ձեռքի նոնակներ, վորոնցով հայթայթեցին մեր սպիտակ վարդիականներին նրանց արևմտյան յեղբայրները, այնպես վոր այդ նոնակները զեռ շատ յերկար ժամանակ հերիք է: Բացի դրանից, պատերազմի ժամանակ զորքերը ձեռք են բերում հակաուսկորդից սպանական ամեն տեսակ բազմաթիվ գույք, վորպես կողոպուտ, այսինքն՝ վորպես սպանական ավար: Այդ գույքից նոնակները միշտ կարելի չէ ինկույն և յեթ ողտագործել թշնամու զեմ, վորովհետև նրանք, բացի մարդու ձեռքից, ուրիշ վոճ մի հարմարանք չեն պահանջում: Այս տեսակետից էլ, բացի այն նոնակներից, վորոնք պատրաստվում են իրենց ֆորթիկ-գործարաններում, ողտակար է ուսուցանարել և ստարերկրյա նոնակները և կարողանալ նրանց հետ վարվել:

Ով գրտե թե մարտում ինչպիսի նոնակ կլինին մարդու ձեռքը, բայց լավ, կարող ձեռքում նրանք բո-

լորն ել կարող են թշնամուն մեծ հարված հասցնել: Բայց յեթե ձեռքի տակ կա զանազան օրպարների մի քանի նոսակներ, այն ժամանակ կարելի չե մտածել թե յերբ և վորը նետել:

Յեթե նոսակ պետք և նետել այն հակառակորդի վրա, վորը իրար գլխի չե հավաքվում, կուտակվի և, մտենում և մեր խրամատներին կամ զրոհի չե գալիս, այն ժամանակ ավելի լավ և վերցնել չուզունե նոսակը, վորը կարտված և ակոսիկներով, վորովհետև նրանցից ավելի շատ կտորներ և ստացվում և այդ կտորները ավելի հեռու յեն թռչում: Յեթե հարկավոր և վորեւ արգելք քանդել, խրամատը հողով լցնել, հակառակորդի գնդացիքը վոչնչացնել, այն ժամանակ ավելի լավ և վերցնել թիթեղյա նոսակը, վորովհետև նրա միջի պայթուցիկ նյութը ավելի ուժեղ և և նա միայն իր պայթյունի ուժով կարող և քանդել խրամատը, փլցնել շերտափակը (բլինդաժը)\*:

Յեթե հարկավոր և սարսափեցնել, խրացնել հակառակորդին, վորը դտնվում և, որինակի համար դաշտային պահակում, պայթյունից առաջացած աղմուկ ու անկարգության ժամանակ նրա դաշտային պահակը ջախջախելու կամ վոչնչացնելու համար, կամ նրա գնդացիքը գերի վերցնելու համար, ելի ավելի լավ և գործածել թիթեղյա նոսակը, վորովհետև նրա պայթյունից սարսափելի զզրոց և ստացվում և կտորները թռչում են վայրենի վոսնոցով, ինչպես լուրջ արկերը: Բայց գրանից, ամեն տեսակի նոսակ լավ և

\*) Շերտափակը — դա մի շինվածք և խրամատում, վորը պաշտպանում և արիւ բեկորներից (կտորներից) և շրտվների զընդակներից: Թեթե շերտափակը կազմված և գետնի մեջ խրած մութակներից (հեռարաններից), վորոնց վրա գերաններ են ձգած և ծածկված վերից հողով կամ հողայից ստարակներով:

գործում այն ժամանակ, յերբ նա պայթում և գետնից քիչ բարձր, որինակ մարդու հասակի բարձրության վրա, վորովհետև հողի վրա պայթելիս նրա կտորների մի մասը հողի մեջ և մտնում և հենց պայթյունի ուժը ներգործում և հողի վրա: Այդ պատճառով, յեթե նոսակը պիտի նետել մարդկանց վրա, այն ժամանակ հարկավոր և աշխատել այնպես նետել, վոր նա պայթի ողում: Լավ վործված նոսակավորները դրա համար հաճախ նոսակները պահում են ձեռքում 1-2 հաշվելով: Այսպես գործելու համար պիտի շատ ճիշտ աչքաչափ ունենալ, նետելու ճիշտ մինչև հակառակորդը, ճիշտ ժամանակի հաշիվ անել և մեծ փորձ ունենալ նետելու: Դրա համար, սկզբնական շրջանում ավելի լավ և խուսափել այս ձևից, այլ նետել նոսակը միանգամից, միայն ուժ տալ վոր նրա թռչքը մի քիչ ավելի լինի, քան 4 վայրկյանում: Յեթե նոսակը նշանակված և խրամատ կամ խրամատային սարքավորում քանդելու, այն ժամանակ ավելի լավ և, վոր նա պայթի գետնի վրա: Կերջիվերջո, բոլոր նոսակներն ել կարելի չե գործադրել բոլոր դեպքերի համար, յեթե նրանց կարողանանք ժամանակին նետել և տեղը հասցնել:

Ինքնըստինքյան բոլոր նոսակներն առանց պատրույգի անվնաս են, վորովհետև նրանք հարվածից և խփելուց չեն պայթում. չեն պայթում նույնիսկ և այն դեպքում յեթե նրանց գնդակ ել կաշի շատ հազվադեպ ժամանակ նոսակը կարող և վառվել (կրպչիլ), և միայն շատ ուժեղ կրակը կարող և նրան պայթեցնել: Համենայն դեպս մեկ պայթող նոսակ, մանավանդ շաձևը, կարող և պայթյուն առաջացնել մյուս նոսակներին մեջ, վորոնք նրա կողքին են գտնվում:

Սակայն նոնակաների պատրույգները շատ վտանգավոր են, վերսկզբի նրանց բոցավառիչներին և ճայթիչներին մեջ կա պայթուցիկ նյութ, վորը շատ մեծ ուժ ունի, այդ նյութը կոչվում է ՇՈՒՍՅՈՒԿ ԱՆՊԻԿ: Շոուսյուկ սնդիկը պայթում է և՛ հարվածից և՛ կայծից և՛ շփվելուց: Դրա համար հասկանալի չե, վոր պատրույգները չի կարելի վոչ քշփորել, վոչ շանգոտել, և վոչ խփել նրան նոնակի մեջ մտցնելու համար, վայր չձգել և յերբեք չի կարելի նրանց վոչ յիս պտուտակել, վոչ քանդել, թեկուզ հենց նայելու ցանկությունից գրգռված՝ իմանալու թե ինչպիսի կազմություն ունի, չսարքել յեթե նրանք սարքին չեն: Այդպես անզգուշ վարվելուց պատրույգը կարող է պայթել, իսկ նրա մեջ յեղած պայթուցիկ նյութն այնպիսի հատկություն ունի, վոր միայն պատրույգի պայթյունը կարող է մարդու աչքը հանել, քիթը, մատը կտրել և սոնասարակ այնպես աշխարհակել մարդուն, վոր նա շարքից բոլորովին դուրս գա: Այս բանը հատկապես մեր կարմիր բանակայիններին հարկավոր է հիշել, վորոնք ըստ սովորության վոչնչի չեն հավատում մինչև իրենց աչքով չեն տեսնում, հաճախ նրանք պտուտակում կամ ըզով քրքրում են պատրույգը և զո՛հ են գնում իրենց անտեղի հետաքրքրության: Դրա համար ել պատրույգները նոնակներից առանձին են պահում մինչև վերջին բուպեն, այսինքն՝ մինչև նետելու ժամանակը և վորքան հնարավոր է մեկ մեկուց դատ-զատ, այսինքն՝ դարսում են խժուժներով, լաթերով փաթաթած, կամ թեփի մեջ և այլն:

Նոնակաները դուրս տալու ժամանակ, նոնակներն ու պատրույգները պետք է դնեն և անսարքները չվերցնել (այսինքն՝ այնպիսիները, վորոնց դարկանը

ծռված է, յետքաշիկը կամ մարտական դոպանակը թույլ է գործում, պատրույգները տրորված են, շփական հարմարանքները խոնավացել են և այլն): Յերբեմն զարկանի հարմարանքով նոնակները փուստ են տալիս, այդ նրանից է, վոր զարկանը կամ ծռված է կամ զարկանի խողովակում ավազ է ըլկել և այլն: Այդպիսի նոնակները գործի համար անպետք են և ավելի լավ է չվերցնել, չընդունել այդպիսիները, քան թե խորամուտ լինել իմանալու սարքին են թե վոչ:

### ՅԵՐԲ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԵԼ ՆՈՆԱԿՆԵՐՈՎ

Նոնակը մերձակա մարտի զենք է, մանավանդ հարկավոր է գալիս այն ժամանակ, յերբ հակառակորդը մոտ է գտնվում և յերբ նրան հրետանական արկով չի կարելի դուրս քշել:

Նոնակը մոտիկ տարածության վրա ավելի ուժեղ է հուսալի չե գործում, քան թե հրացանի զնդակը: Նրա գործողությունը նման է հրետանական արկի գործողության, վորոհետև նա կարող է քանդել խրամատը, շերտափակը (բլինդաժ), լարափակոցները և շատ զեպքում մարդկանց մեծ կորուստ պատճառել: Գրա համար նոնակին ուղղակի կարելի չե մերձակա մարտի հրետանի անունը տալ. - «ձեռքի հրետանի», ինչպես կատակով անվանում են նրան կարմիր բանակայինները:

Ամենից ոգտավետն է նոնակով գործ ունենալ հակառակորդի հետ, յերբ նա, ինչպես ասացինք, մոտիկ տարածության վրա թագստոցումն է նստած: Այդ զեպքում դիպուկ նետած նոնակը վորպես քար բնկնելով հակառակորդի վրա, կարող է նրա խրամատում մեծ դժբաղտություն առաջ բերել: Նույն կերպ

լավ են գործում նաևակները մոտիկ տարածության վրա և՛ գնդացիրների դեմ:

Գնդացիրները խրամատներում թափցնում են ծածուկ տեղերում: Այդ տեղերը (վոր կոչվում են գնդացրային բներ) լավ ամրացնում են փայտով, հողով թե՛ կողքերից և թե՛ վերևից: Հրաձգության համար թողնում են միայն մի նեղ անցք: Հրացան արձակել այդ բների վրա վոչ մի ուղևտ չունի. չես ծակի անցկացնի, իսկ յեթե գնդակով բնի ծակին ել (անցքին) խփես միևնույն և շատ քիչ ուղևտ ունի, վորովհետև գնդացրորդները նստած են վահանների յետևում, վորոնց գնդակը չի ծակում անցնում: Ահա հենց այդ դեպքում լավ է նաևակ նետել և այն ել վոչ թե մեկը, այլ միանգամից մի քանիսը, համազարկով և՛ անցքի վրա, և՛ անցքի առջևում և բնի վրա, և բնի յետևի խրամատի վրա: Հաջող կերպով ընկած մի քանի նաևակները կամ քանդում են գնդացրային բունը և սպանում են գնդացրորդներին կամ գնդացրային բնի սպառնահանը այնպես են քանդում, վոր այլևս նրա միջով հրաձգությունն անհնար է դառնում:

Նաևակները մեծ գործ են կատարում և՛ այն ժամանակ, յերբ մարտիկներին հաջողվում է հակառակորդի խրամատները ներս խուժել: Այժմ գիրքում պաշտպանվողները տեղավորվում են կուտակված ձևով, բներով, մի ջոկի, դասակի համար փորած խրամատներում, վորոնք միացած են իրար հետ մի խրամուղիով (յեղքով): Այս բոլոր խրամատները կարող են գնդակոծել մեկ մեկու և զրա համար—յեթև մի այդպիսի խրամատ վերցնես քեզ գնդակոծման կենթարկեն մյուս խրամատներից, աջից, ձախից: Այդ պատճառով էլ խրամատ ներխուժողը հարկազրկված է մարտ վարել

համարյա իր չորս կողմի վրա: Սակայն մեկ վոր հակառակորդը պարտված է, (հաղթված է) նրան այլևս հանգիստ չպետք է տալ, վորպեսզի նա չկարողանա նորից իր ուժերը հավաքել և հարձակման անցնել, այսինքն՝ հակազրոհ կատարել: Դրա համար գրոհողների գլխավոր ուժը թշնամուն առաջին գծից դուրս քշելով, նետվում է յերկրորդ գծի վրա, իսկ հատուկնշանակված գորամասերը լայնացնում են ձեզքվածքը այսինքն՝ մարտ են վարում կողքերից, մաքրում են խրամատները պատահաբար կամ գիտավորյալ կերպով մնացած պաշտպանվողներից, վորոնք թագնվում են ապաստաններում կամ սկսում են շտապ ամրանալ հույս ունենալով, վոր յուրայիններն իրենց կպաշտպանեն հակազրոհով:

Խրամատային մարտում չես կարող վոչ բացազատվել, վոչ էլ ամբողջ ուժող ընկնել հակառակորտի վրա, վորովհետև նեղվածք է, յերկու մարդ իրար կողքի հաղիվ անցնեն: Կրակելն անողուտ է, վորովհետև անցքերը (խրամուղիները) դիտմամբ վորբապըտույտ են անում. ուր էլ վոր գնաս, կարծես, թե առաջ պատ է կանգնած. հակառակորդը նախատեսնելով մարտը խրամատներում շինում է անցկալներ հողից, փայտից, վորը լարով փաթաթած է լինում և ինքը պաշտպանվում է այդ անցկալներով: Այս պատճառով շատ դասագող պետք է շարժվել, ասեն մի քայլ առաջ գնալը մարտով պիտի լինի, իսկ մարտը—համարյա ամբողջությամբ նաևակներով է լինում: Նաընակներով քար ու քանդ են անում անցկալները, նաևակներով աշխատում են անցկալների միջով հարվածել հակառակորդին, նաևակներով հակառակորդին ապաստանից դուրս են քշում և այլն: Իհարկե, հակառակորդը նույնպես, իր հերթին պաշտպանվում է

նույն միջոցներով, և դրա համար հարձակվողի խնդիրն և այստեղ, վորքան հնարավոր է, նոնակային կրակը գարգացնել, խլացնել, ճնշել հակառակորդին իր նոնակներով:

Մեծապես ոգնում են նոնակները և հարձակվող հակառակորդից պաշտպանվելու ժամանակ: Նոնակները վոչ միայն խփում են հակառակորդի խմբակներին, վորը գրոհի յե նետվում՝ լարերի, անցքերի միջով առաջ և շարժվում, այլև հակառակորդին դուրս և քըշում ծածկարաններից, վորոնց յետևում նա թագնը վեկով մոտենում և մեր խրամատներին, մանավանդ արկերից բացված ձագարներից, վորոնք գնդակներից ազատվելու համար լավ աղաստաններ են: Գիշեր ժամանակ, յերբ հակառակորդը մթության պատճառով ավելի խիտ շարքերով և հարձակվում քան ցերեկը ավելի քիչ և թագնվում ծածկարանների յետևում, և վոր գլխավորն և նրա համար, վոր մթության մեջ իրար չկորցնեն և ուղղություն կարողանան պահել, պաշտպանվողները ձեռքի նոնակներից կարող են կրակային պատ շինել, կամ, ինչպես ասում են, կարող են ծածկույթ կազմել: Դրա համար առաջուց խրամատների առջևում նոնակի նետման տարածության վրա նշանակում են վորևե գիծ արկանքի վրա, որինակ, խրամ, թփուտի գիծ, լարավակոցների գիծ. այս գծի վրա փորձնական հրաձգություն են կատարում, կամ ավելի ճիշտ, «նշան են անում» նոնակներով, և յերբ հակառակորդը գալիս հավասարվում է այդ գծին մարտիկները չորս կողմից այդ գծի վրա յեն նետում նոնակները:

Նոնակներով լավ է գործել և տանկերի դեմ, յեթև հրետանական կրակը նրանց չի արգելում և նրանք մոտենում են զորքերի տեղավորմանը կամ խրամատներին: Մեկ նոնակը, ճիշտ է, տանկին քիչ

փնաս կարող է պատճառել, նույնիսկ յերբ նա ընկնի թեկուզ տանկի տակը, մեքենայի մոտ,—ամենից վտանգավոր տեղը: Բայց յեթև միաժամանակ նետենք տանկի տակը ամբողջ մի կապոց՝ բաղկացած 3—4 նոնակից, այն ժամանակ նույնիսկ տանկն էլ կենտանի չի մնա:

Դիրքային, այսինքն՝ շարժական պատերազմում, յերբ միապաղաղ ճակատ գոյություն չունի և յերբ հակառակորդները ձգտում են հաղթության հասնել վոչ այնքան ճակատ առ ճակատ կռվելով, վորքան թիկնանցումով, շրջապատելով, նոնակը փոխարինում է ամեն մի հետախույզի, ամեն պահապան զորամասի: Հետախույզության մեջ, — որինակ, յերբ մի ջոկ և նշանակված կամ փոքր պահապան զորամաս է, — հրետանի հետո վերցնել չես կարող, այնինչ հակառակորդին պետք է կամ պահել, չթողնել առաջ դա, կամ ընդհակառակը վոչնչացնել, յեթև նա ամբացել է, — այստեղ ահա նոնակները առաջին տեղն են բռնում:

Քաղաքացիական պատերազմի ժամանակ, հյուսիսային ճակատում, այսինքն՝ Արխանգելսկի նահանգում, ձմեռը 1919 թ. ամբողջ կռիվը գլխավորապես գյուղերի ու ավանների համար եր լինում, վորովհետև, ցրտերին, անտառոտ տեղանքում, անձանապարհ և վոչ մեծ ուժերով յերկու կողմի համար էլ, իհարկե, չեր կարելի միապաղաղ ճակատ կազմել: Դրա համար ամբանում եյին գյուղերում, վորտեղ գյուղ չկար, այնտեղ էլ ճակատ չկար: Սակայն դյուրում հաճախ ամեն մի տուն մի բերդ եր, վորը հարկավոր եր վերցնել կռվով: Իսկ այդ հեշտ չեր, մանավանդ մեղ համար՝ վորովհետև մեր հրանոթները քիչ կյին և հաճախ էլ չեյին կարողանում զորամասերի յետևից գալ հասնել, թագվում մնում եյին ձյունի կույտերի մեջ

Չյուշնով կիսածածկ, անտառային դյուղերում, առանց մեծ կորուստների մոտենալ նրանց այնքան ել դժվար չէր, բայց հակառակորդին դուրս բշխլ—վորը արձակում էր ամեն մի լուսամուտից, դռներից, տանիքներից, հրացաններով ու գնդացիրներով—բոլորովին անհնար կլինեք յեթե այդ ժամանակ ոգնության զգային նունակները: Նունակավորները սողալով մոտենում եյին աներին, համարյա թաղվելով ձյան կույտերի մեջ, ձյունե թագասոցներից նետում եյին նունակներ այս կամ այն խրճիթի վրա: Այս միշտ պսակվում էր հաջողութեամբ, վորովհետեւ, յեթե նունակով միշտ չէր հաջողվում հակառակորդին փնաս պատճառել, բայց հաճախ հաջողվում էր հրդեհել նրա ապաստանը և ծուխ դնելով հակառակորդին հանել այնտեղից: Անըսպասելի պայթյունը և սարսափելի տրաքոցը, վորն առաջանում է պայթյունից, յերբեմն անկայուն ու վատ սովորեցրած թշնամու վրա ավելի յե ներգործում, քան հենց նրա կտորները:

Թե յերբ և հարկավոր գալու և յերբ կարելի յե գործել նունակներով պատերազմում, իհարկե, այդ բոլոր դեպքերը չի կարելի թվել և չես նախատեսնի, վորովհետեւ հենց ինքը մարտական պարագան և հաճախ փոփոխվում: Մի մարտում ճիշտ համարվածը կարող է մի ուրիշ մարտում թույլ և սխալ համարվել: Մարտիկ-նունաձիգի համար գլխավորը կռուսողատությունն է, վորը նրան կթելադրի յերբ գործի դնել նունակը, յերբ գործադրել հրացանը, յերբ և հարկավոր գործ դնել ձարպկություն ու հմտություն:

Սակայն պետք է կարողանալ նունակը ինչպես հարկն է նետել և ցանկացած տեղը նետել. իսկ այդ ձեռք է բերվում վարժություններով:

Թեև նունակն այնքան ել ծանր արկ չէ—սովո-

րական ձեռքի նունակ է, բայց նույնիսկ ուժեղ մարդը, յեթե սովոր չէ, չի կարող նրան նետել հեռու, իսկ յեթե նետի յել այն ել առաջին 8—10 հատը նետելուց հետո, այնպես կցավեցնի ձեռքը, վոր հետեյալ որը շարժել չի կարողանա: Յեւ ընդհակառակը, միջակ ուժի տեր, բայց վորձված նունաձիգը կարող է հեշտութեամբ նետել նունակը 70, նույնիսկ 80 քայլ հեռու: Ամբողջ գաղտնիքը նրանումն է, վոր մարդ իրեն պետք է վարժեցնի նետելուն և սովորի նետելու ժամանակ ոգտվել վոչ միայն աջ ձեռքով, այլև ամբողջ իրանով (կորպուսով):

Ամենից հարմար է նունակը նետել այսպես. ձախ կողքով կանգնել դեպի նպատակը, առաջ դնել ձախ վոտքը և մարմնի ամբողջ ծանրությունը պցել աջ վոտքի վրա. դրա հետ միասին աջ ձեռքը յետ տանել նունակը բռնած, նրանով մի լրիվ շրջան գծել գլխի վերևում և նետել նշանի վրա այնպես, վոր աջ ձեռքի հետ միասին առաջ արվեն և՛ աջ ուսը և՛ իրանը: Այս ձևով նետելուն ոգնում է ամբողջ մարմինը, նետումն ավելի ուժեղ թափ է ստանում, վորի հետևանքով և նունակը թռչում է ավելի հեռու: Այս ձևով նետելու վարժություններ շատ պետք է կատարել՝ վարժության համար գործածելով առանց պատրույգի նունակներ, նունակի քաշն ունեցող քարեր կամ վայտե կոճուրիկ—և այդպիսով կամաց-կամաց կարելի յե վարժվելն ունակը հեռու նետել կարողանալուն:

Սակայն մարտական պարագայում հազվապես է լինում ամբողջ հասակով կանգնած նետումը և ազատ կերպով ձեռքը շարժելը.—Դրան խանգարում է հակառակորդի կրակը, մյուս կողմից և խրամատի ներվածությունը: Դրա համար նունակը կանգնած նե-

տելուն սովորելուց հետո, պետք է անմիջապես անցնել ծնկից, նստած և վերջապես պառկած նստելուն:

**Գ լիսավորապես մաքսիկից պահանջվում է նրանակը ցնեցնել հետո, ամբողջ մաքսի միասնական ցարժումով լեզ ամեն ցետակ զուրբուցից:**

Ամեն մի նոնակ մեծ թվով կտորների յե բաժանվում, վորոնք թուշում են 80, 100 քայլ և նույնիսկ ավելի հոու, դեպի ամեն կողմ: Այդ պատճառով, վորպեսզի նոնակավորը չվնասվի բեկորներից (կտորներից), հարկավոր է նոնակը նետել կամ ծածկարանի յետևից (թագատոցից), որինակ խրամատից, և նետելուց հետո կպչել խրամատի առջևի պատին. յեթե ծածկարան չկա, այն ժամանակ ցնեցնուց հետո անմիջապես պառկել գետի վրա: Այդ ժամանակ բոլոր կտորները կթուշեն զլիսի վերևով: Այս նույնը պետք է կատարել և այն դեպքում, յերբ թշնամու նոնակն ընկնում և վտանգավոր հեռավորության վրա: Նախագգուշուցան այսպիսի միջոցը—յեկրորդ հիմնական կանոնն է նոնակ ցնեցնու ժամանակ. այս կանոնը պարտադիր է կանգնած, նստած, ծնկից և այլն նետելու ժամանակ:

Վորպեսզի նոնակը հաջող կերպով ընկնի ծածկարանի յետևը, հարկավոր է վոր ընկնի այնտեղ վերևից, կարճես թե յերկնքից: Դրա համար նրան պետք է նետել, վոչ միայն ամբողջ ուժով, այլև դեպի վեր, այնպես վոր վերև նետելու հետ միասին նա թուշի և հոու:

Նոնակի այս ուղղորդ ցնեցումը, վորքան հնաբավոր է ուղղորդ դեպի վեր, կամ, ինչպես ասում են ուղղորդ հետագծով, այդ յեբորդ կանոնն է նոնակցեցի ցնեցնու ժամանակ:

Ճիշտ նետումը, այսինքն՝ նշանի վրա քցելու դիպուկությունն սկսում է զարգանալ արդեն նրանից հետո, յերբ նոնակավորը կլուրացնի նետելու ամբողջ մեխանիկան և նոնակի առանձնահատկությունները: Յեթե այդ չի յուրացրել, նա նետելու ժամանակ ամենից շատ կմտածի այն մասին թե ինչպես անի, վոր նոնակը ողի հետ միասին չթուշի, ինչպես անի, վոր ողը նոնակին չպահի, վոր ձիգ տված շփիչով նոնակներ չնետի և այլն: Յերբ նա հարկավոր հմտությունը, ունակությունն ու ձարպկությունը ձեռք կրերի նետելու համար, այնուհետև նրա բոլոր շարժումները կդառնան կանոնավոր, ձեվակերպված ու հաշված, և միևնույն ժամանակ հենց իրեն հավարանակառելի, կամ, ինչպես ասում են, կդառնան ավտոմատիկ:

Դիպուկությունը նույնպես վարժություններից հետո յե ձեռք բերվում, այդ պատճառով հենց աշխատանքի սկզբից նոնակների հետ գործ ունենալիս հարկավոր է կանոն սահմանել—յերբեք նոնանը չնետել այնտեղ, վորտեղ աչքին յերևում, և հենց ենպես, այլ միշտ վորև և նշան պետք է վերցնել: Կարևոր չե, թե նշանի վրա չես ձգի կամ տեղ չես հասցնի, սակայն այդ միանգամից կսովորեցնի հարկավոր ուղղությունը վերցնելու: Առաջ վերցնում են խոշոր նշաններ, վորոնք լավ տեսանելի յեն, ինչպես որինակ՝ պատ, թփերի շարք հետո ավելի ու ավելի փոքր նշաններ, որինակ՝ գետինի վայր ընկած գերան, քար, փոքր թուփ և վերջապես, ամենից դժվարները՝ փոսեր, խրամներ, խորխորատներ, այսինքն՝ այնպիսի նշաններ, վորոնք չնայած իրենց մեծությանը, դրսից նկատելի յեն, վորովհետև տեղանքի վրա աչքի չեն ընկնում, տեղանքի վրա դուրս

ցցված չեն: Սակայն նունակների հետ գործ ունենալիս, բոլոր դեպքերում, արագություն, հեռու և զիջուկ նետելու հմտություն և ունակություն ձեռք բերելով, պետք է ամենորյա վարժություններով պահպանել այդ ունակությունները, այլապես ամբողջ այդ ձեռք բերած փորձն ու հմտությունները հեշտությամբ կմոռացվեն:

## ԲԱՌԱՅՈՒՅԱԿ

Ագույց Мухта  
Ակոսներ, ակոսիկներ Бороздки  
Ամրություն Укрепление  
Անցկալ Завал  
Անցք (զարկանի) Канал (ударника)  
Ապաստան Убежище  
Ապուռ Зацеп  
Արդելք Препятствие  
Արկ Снаряд  
Արույր Латунь  
Բազապրություն Состав  
Բեկորներ, կտորներ Осколки  
Բեվեռիկ Шпеньга  
Բիկֆորդյան քույր Бикфортов шнур  
Բոցավառիչ Воспламенитель  
Բոցավառիչ մեքանիզմ Воспламеняющий меха-  
նизм  
Շուկիք Чека  
Շուկիք-պահպանակ Чека-предохранитель  
Յուձին, պատրույգ Запал  
Գնդակոժ Обстрел  
Դաշաային պահակ Полевой караул  
Դիտող Наблюдатель  
Դիրք Позиция  
Դրսի խողովակ Наружная трубочка  
Զարկան Ударник  
Թակարգ Кашкан  
Թանակ Колпак, колпачок  
Թիթեղ Пластинка  
Թիկնանց Обход

Թև Փланг  
Լուսարձակ Проектор  
Լարափակոց Проволочное заграждение  
Սաչաձև կրակ Перекрестный огонь  
Սթոց Жало  
Սծուծ Цакля  
Սրտանել Браковать  
Սոտանք Брак  
Սրամատ Окоп  
Սրամուզի Ход сообщения  
Սյանան Шتونор  
Սյան Пробка  
Ծածկույթ Завеса  
Ծնկաձև խողովակ Коленчатая трубочка  
Կանթ Шко  
Կափարիչ Крышка  
Կև Կрючок  
Կոթ Рукоятка  
Կորներ, բեկորներ Осколки  
Կորված Ներշնչող (— այ оболочка)  
Կրակատար (վառողային) քուղ Огнепроводный (пороховой) шнур  
Հակադրոճ Контр-атака  
Համազարկ Залп  
Հապաղում Замедление  
Հարմարանք Приспособление  
Հարվածում поражение  
Հարվածային գործողություն նոնակ Граната ударного действия  
Հենարան Упор  
Հետագիծ Траектория  
Հեռակայություն փողակ Дистанционная трубка  
Հեռակայություն Дистанция

Հրադեն Огнестрельное оружие  
Հրահան Курок  
Հրապատիճ, պատիճ Капсюль  
Հրահանդիչ Инструктор  
Հրթիռ Ракета  
Չազար Воронка  
Ճակատ Фронт  
Ճայթիչ Детонатор  
Ճայթիչ-պատիճ Детонатор-капсюль  
Մարմին, իրան Корпус  
Մարտական վոտք Боевой взвод  
Մարտական զսպանակ Боевая пружина  
Մարտաթերթ Боевые припасы, боеприпасы  
Մութակ (հենարան) Стойка  
Յետքաշիկ Оттяжка  
Նետում Броск  
Ներսի խողովակ Внутренняя трубочка  
Նոնակ Граната  
Նոնակավոր Гранедер  
Նոնաձիգ Гранатометчик  
Շառաչուկ սնդիկ Гремучая ртуть  
Շերտափակ Бойница  
Շփական նոնակ Терочная граната  
Շփիչ Терка  
Ող Кольцо  
Ուղղապահ աղուցիկ Направляющая муфточка  
Ուղղորդ Крутой  
Ունակույթյուն Տնորվա (пачок)  
Պահպանական թասակ Предохранительный кол-  
Պահպանական ող Предохранительное кольцо  
Պայթյուն Взрыв  
Պայթուցիկ լիցք Разрывной заряд  
Պայթուցիկ նյութ Взрывчатое вещество

Պատիճ-բոցալառիչ Кансюль-воспламенитель  
 Պատիճ, հրապատիճ Кансюль  
 Պատրույգ, բուժին Запат  
 Պարկուճ Гильза  
 Պարուտակ Оболочка  
 Պարուրակ Завертка  
 Պտուտակիչ Отвертка  
 Զոկատ Отряд  
 Սեռնակ, սռնակ Ось  
 Վահան Цит  
 Վաղեվազք Перебежка  
 Վառոդ Порох  
 Վառն Втулка  
 Տազնապ Тревога  
 Տրպար Образец  
 Տրոտիլ Тротил  
 Յանց Решетка  
 Փշալար Колочая проволока  
 Փուտտ, փոտոց Осечка  
 Քուղ Шнур

**Յ Ա Ն Կ**

1. ԻՆՉ ԲԱՆ Ե ՉԵՌՔԻ ԼՈՒՆԱԿԸ . . .
2. ԼՈՒՆԱԿՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ . . .
  - ա. 1914 թ. սիպարի ուսուսական ձեռքի գրքակ.
  - բ. 1915 թ. Քրեանական ձեռքի գրքակ.
  - գ. Միլիտի անգլիական ձեռքի գրքակ.
  - դ. Գեոմետրական սիպարի ձեռքի գրքակ.
  - ե. Լեմանի անգլիական գրքակ.
3. ԻՆՉՊԻՍԻ ԼՈՒՆԱԿՆԵՐԻՅ ԱՎԵԼԻ ԼԱՎ Ե ՈԳՎ
  - ՏՎԵԼ ԶԵՎ ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ԼՐԱՆՅ ՀԵՏ
4. ՅԵՐՔ, ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԵԼ ԼՈՒՆԱԿՆԵՐՈՎ



ԳԻՆՆ Ե 20 ԿՈՊ.

13 255